



Կարգապահական գործ թիվ 17044

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թ-ի հոկտեմբերի 17-ի թիվ 159-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/93-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՇԵՂ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Կարապետ Աղաջանյանի. Մելանյա Առուստամյանի, Տարոն Սիմոնյանի և Կարեն Մեժլումյանի,
քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,
քննության առնելով փաստաբան Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր 387) (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

26.06.2017թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում (**այսուհետ՝ Պալատ**) մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ, նաև՝ Դատարան**) դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 21.06.2017թ. որոշումը (**այսուհետ՝ Որոշում**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործի 2017թ. հունիսի 21-ի հերթական դատական նիստում, ամբաստանյալ Վարուժան Ավետիսյանը խանգարել է դատական նիստի բնականոն ընթացքը, անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ, ինչի պատճառով դատարանը Վ.Ավետիսյանի նկատմամբ կիրառել է ՀՀ քր. դատ. օր-ի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան՝ նիստերի դահլիճից հեռացնելը: Այնուհետև դատական նիստն ընդմիջվել է մեկ ժամ ժամանակով, որից հետո դատական նիստը շարունակվել է, և դատարանը թույլատրել է Վարուժան Ավետիսյանին մասնակցել դատական նիստին, սակայն պաշտպան Մուշեղ Շուշանյանը չի մասնակցել դատական նիստին:

Դատարանը, Որոշմամբ վկայակոչելով նշված փաստական հանգամանքները և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 2-րդ մասի 8-րդ կետը, 5-րդ մասի 1-4 կետերը, 73-րդ հոդվածի 2-

րդմասը, 5-րդ մասը, 314.1-րդ հոդվածի 7-րդ մասը, ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4-րդ գլխի 4.1 կետը, գտել է, որ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 2017թ. հունիսի 21-ի դատական նիստի ժամանակ փաստաբան Մուշեղ Շուշանյանն իր գործողություններով ակնհայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի նկատմամբ, քանի որ առանց դատական նիստը նախագահողի թույլտվության լքել է դատական նիստեր իդահիճը և դրանով իսկ խոչընդոտել է նիստի բնականոն ընթացքին:

Դատարանը 21.06.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որովորոշել է. «Ամբաստանյալ Վարուժան Ավետիսյանի պաշտպան Մուշեղ Շուշանյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատի»:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 07.07.2017 թիվ 186-Ա/ԿԳ-17044 որոշման հիման վրա փաստաբան Մուշեղ Շուշանյանի նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) 4.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Սույն կարգապահական գործով Դիմող է ճանաչվել դատարանը (Արտուշ Գաբրիելյան):

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Կարեն Քամալյանին (այսուհետ՝ նաև Նախապատրաստող):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողից բացատրություն չի պահանջվել:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի և ժամի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4.1 Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 31.08.2017թ. կազմել է եզրակացություն, որի եզրափակիչ

մասում նշել է. «Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, հաստատված համարելով սույն եզրակացության 7-րդ կետում նշված փաստերը, սույն եզրակացությունը ներկայացվում է Պալատի խորհրդին:

Փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է Պալատի խորհուրդը»:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 01.09.2017 թ., նիստը տեղի է ունեցել 17.10.2017թ. ժամը 18:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ՝ նաև Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով Մուշեղ Շուշանյանը հանդիսանում է Վարուժան Ավետիսյանի պաշտպանը:

2) 2017թ. հունիսի 21-ի հերթական դատական նիստում, ամբաստանյալ Վարուժան Ավետիսյանը հեռացվել է դատական նիստերի դահլիճից՝ դատական սանկցիայի հիման վրա:

3) Դատարանի կողմից ընդմիջում հայտարարելուց հետո փաստաբան Մուշեղ Շուշանյանը առանց որևէ պատճառաբանության, դատական նիստին չի ներկայացել:

Նշված փաստերը հաստատվում են դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ և դատական նիստի ձայնագրությամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար Գևորգ Գևորգյանի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Մուշեղ Շուշանյանը փաստաբան է հանդիսանում 28.02.2000թ., և 2006-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 12 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնցից մեկը կարճվել է, իսկ տասնմեկն ընթացքի մեջ է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Մուշեղ Շուշանյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.1 ենթակետի խախտում, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև **Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պարասխանալուծության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև **ՔԴՕ**) 314.¹-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի...որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ կիրառել հետևյալ սանկցիաները ... 4) պարասխանալուծության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը:

ՔԴՕ-ի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան:

ՔԴՕ-ի 314.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ կիրառել հետևյալ սանկցիաները՝ նիստերի դադարից հետո անց:

ՔԴՕ-ի 69-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետին համապատասխան՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է սանկցիան կիրառելու պահից՝ սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում:

ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝ ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին:*

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Միևնույն ժամանակ փաստաբանը նպաստում է արդարադատության իրականացմանը և այդ առաքելության շրջանակներում կոչված է ծառայել արդարադատության շահերին: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները:

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով հստակորեն սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կանոնագրի 4.1 ենթակետին, որը, լինելով բլանկետային իրավադրույթ, հղում է կատարում դատարաններում գործող վարվելակերպի կանոններին: Վերջիններս նախատեսված են ՔԴՕ-ում և, մասնավորապես, դրա վերոնշյալ դրույթներում: Ըստ այդմ, փաստաբանը պարտավոր է ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և այն դեպքում, երբ դատարանը փաստաբանի վստահորդ ամբաստանյալին հեռացնում է դատարանի նիստերի դահլիճից, պարտավոր է դատաքննության հետագա ընթացքին անպայմանորեն մասնակցել: Փաստաբանի սույն պարտականությունը գործում է դատարանի կողմից սանկցիան կիրառելու պահից: Փաստաբանի կողմից իր նշյալ պարտականությունները չկատարելը կարող է դատարանի կողմից որակվել որպես դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու ձևով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում, քանի որ ՔԴՕ-ի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ հետից հետևում է, որ դատարանը չի կարող շարունակել դատաքննությունն առանց պաշտպանի, եթե պաշտպանի վստահորդ ամբաստանյալին հեռացրել է դատական նիստերի դահլիճից: Ուստի՝ քննարկվող դեպքում փաստաբանի կողմից նիստին չներկայանալը հանգեցնում է ոչ միայն դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելուն, այլև դատական նիստը հետաձգելու ձևով դատաքննության ձգձգմանը՝ այդպիսով խոչընդոտելով դատական նիստի բնականոն ընթացքը:

Ավելին՝ փաստաբանի այդօրինակ վարքագիծը կասկածի տակ է դնում սեփական պարտականությունների նկատմամբ նրա ընդհանուր բարեխղճությունը, քանի որ փաստաբանի պարտականությունները չեն սահմանափակվում միայն իր վստահորդի հանձնարարության կատարմամբ, այլ ընդգրկում են տարաբնույթ այլ պարտականություններ, այդ թվում՝ բարեխիղճ վերաբերմունքի դրսևորումը դատարանում գործող վարվելակերպի կանոններին: Հետևաբար Պալատի կողմից փաստաբանի քննարկվող գործողությունները կարող են քննության առարկա

դառնալ Կանոնագրքով նախատեսված նորմերի պահպանման ապահովման տեսանկյունից:

Սույն պարագայում ամբաստանյալ Վարուժան Ավետիսյանի նկատմամբ կիրառելով դատական նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիան՝ նախագահողի կողմից հայտարարվել է մեկ ժամ ընդմիջում, ինչը նշանակում է, որ ընդմիջումից հետո դատական նիստը պետք է շարունակվեր, և, համապատասխանաբար, Պատասխանողը պարտավոր էր ներկա գտնվել նիստին՝ ենթարկվելով նախագահողի օրինական կարգադրությանը և ՔԴՕ-ի վերոբերյալ պահանջներին: Այնինչ, Պատասխանողը դատարանի կողմից նիստը մեկ ժամով ընդմիջելու ժամանակ չի ներկայացրել որևէ հարգելի և ողջամիտ հիմնավորում կամ պատճառաբանություն առ այն, որ ինքը չի կարող ներկա գտնվել դատական նիստին ընդմիջումից հետո, դատարանին չի խնդրել դատական նիստն ընդմիջել ավելի երկար ժամանակով կամ հետաձգել այն, այլ, փոխարենը, դատարանի որոշման կայացումից հետո, երբ այն ուղղակիորեն իրավական հետևանքներ էր առաջացնում Պատասխանողի համար, վերջինս չի կատարել որոշման պահանջը և ընդմիջումից հետո դատական նիստին չի ներկայացել: Դրա հետևանքով դատարանը չի կարողացել շարունակել դատաքննությունը, քանի որ ամբաստանյալի՝ դատական նիստերի դահլիճից հեռացվելուց հետո նախագահողը դատաքննությունը չէր կարող շարունակել՝ առանց Պատասխանողի ներկայության:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի կողմից չեն պահպանվել դատարանում գործող վարվելակերպի կանոնները, և դրա հետևանքով խախտվել են Կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջները:

Կարգապահական տույժի ընտրությունը

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.
- 4) տուգանք.
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, իսկ 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, ինչպես նաև այն հանգամանքը, որ՝ փաստաբան Մուշեղ Շուշանյանը նմանատիպ խախտման համար չի ենթարկվել կարգապահական տույժերի, գտնում է, որ պետք է ընտրել «նկատողություն» կարգապահական տույլժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Մուշեղ Շուշանյանին (արտոնագիր թիվ 387), ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջի խախտման համար.

2. Փաստաբան Մուշեղ Շուշանյանի նկատմամբ (արտոնագիր թիվ 387), կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն.

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին Դիմողին և փաստաբան Մուշեղ Շուշանյանին իրազեկելու (հանձնելու) մասին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Հարություն Հարությունյան